

6237

591

9-67

ՀՐԱՏՔՐԱԿՉՈՒՄԻ ՏՈՒՆ ԵՂՔՈՇՐԻԹ ԸՐԱՄԵՆՆՑ

531  
2-67

№ 1

110

ՎԵՆԴԱՆՆԵՐԻ

ԲՆԱԶԴՆ ՈՒ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹ ԻՒՆԸ

Կաղնեյն

Ա. ԶԻՒՆԿԱՐԵԱՆ և Տ. ՌԱԾՄԱԺԵԱՆ



B 2002

ԱՂԵՔՍԱՆԴՐԱԳՕԼ  
ՏԳԱՐԱՆ ԳԵՈՐԳ Ա. ՍԱՆՈՑԱՆՅԻ  
1897

2010

ՀՐԱՏԵՐԱԿՉՈՒՀԻ ՏԻԿԻՆ ԵՂԻՍԵՐԻԹ ԸՐԸՄԵՆՆՑ

u. m. h. q. r. m. h. f. u. l.

№ 1

591 *uv*

9-67

530  
88-2h

ԿԵՆՏՐՈՆԻՆԵՐԻ

ԲՆԱԶԴԻՆ ՈՒ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԻՒՆԸ



Կապույտ

Ա. ՁԻՒԻՆԿԱՐԵԱՆ և Տ. ՈՍԾՄԱԾԵԱՆ

1002  
8508  
9506



ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՕՂ  
ՏՊԱՐԱՆ ԳԷՈՐԳ Ս. ՍԱՆՈՅԱՆՑԻ  
Типография К. С. Саполица, въ Александрополѣ  
Биб. ул., соб. домъ.

1896

Дозволено цензурою. Тифлисъ, 10 Октября 1896 г.

Համարի Ձևաթուղթ

առ Ի յիշև 1904

ԵՐԿՈՒ ԽՕՍԳ

20/

Լոյս ընծայելով այս առաջին ժողովրդական  
բնագիտական գրքուկը, պարտք ենք համարում  
երկու խօսքով պարզել մեր միտքը: Մեր հրատա-  
րակելիք ժողովրդական բնագիտական գրքուկները  
կազմելու են մի ամբողջ սերիա՝ որը իր մէջ հա-  
մառօտ կերպով պարունակելու է բնական գիտու-  
թիւնների էական մասերը, որոնց մի փոքր ընդար-  
ձակ վերնագիրը կը տեսնի ընթերցողը գրքուկնե-  
րի վերջին թերթի վերայ: Այս և առհասարակ միւս  
գրքուկները կազմելիս՝ միշտ հետևել ենք գերմա-  
նեայի յայտնի ժողովրդական բնագիտական գրքուկ-  
կների հեղինակ՝ Ա. Բեյնշտայնի գրութիւննե-  
րին. որոնցից տեղ տեղ ազատ թարգմանել, տեղ  
տեղ փոփոխել ու կարելոյն չափ մեր կեանքին  
յարմարեցրել և վերջապէս տեղ տեղ էլ այս կամ  
այն հեղինակից օգտուելով լրացրել ենք:

Գրքուկները սրովհետև բուն ժողովրդի հա-  
մար է կազմած, այդ պատճառով լեզուն, օրինակ-

ները աշխատել ենք դիւրամատչելի անել. թէ  
 ո՞րչափ է այդ մեզ յաջողուել՝ թողնում ենք ըն-  
 թերցողներին:

#### ԿԱԶՄՈՂՆԵՐ.

1896 թ. 1-ին Օգոստոսի  
 Ե ն ա

#### 1. Ի՞նչ է ԲՆՇՁԻՐ:

Սիրելի ընթերցող, մեր չորս կողմում կան  
 անթիւ ու անհամար կենդանիներ. բայց ի՞նչ,  
 ճանաչում ենք նրանց, ոչ երբէք. մեծ մասով գի-  
 տենք նրանց անուները միայն, ուրիշ ոչինչ:  
 Արդեօք մեզ ու մեզ հաշիւ տալիս ենք, թէ  
 կենդանիները ի՞նչպէս են կառավարում. ի՞նչ  
 գործեր են կատարում. այդ գործերից ո՞րը կեն-  
 դանին անում է իր հասկացողութիւնով և ո՞րը  
 առանց հասկացողութեան կամ բնազգով: Ար-  
 դեօք մի օր հարցրել ենք մեզ ու մեզ, թէ մեր  
 ու կենդանիների արածները ո՞րքան նման են  
 միմեանց: Ահա այս տեսակ շատ հարցեր կարելի է  
 տալ, որոնց մասին կամ երբէք չենք մտածել և  
 կամ մտածել ենք շատ քիչ:

Այս գրքույկի մէջ ամենից շատ խօսելու ենք  
 բնազգի մասին. իսկ տեղ տեղ և առանձին կեր-  
 պով ցոյց ենք տալու կենդանիների հասկացողու-  
 թիւնն ու խելքն էլ: Մի փոքր համբերութիւն

և մենք կ'սկսենք կամաց կամաց սովորել աչգբոլորը:

Հիմա անցնենք տեսնենք. Ի՞նչ է բնապար: Այս հարցին պատասխանելու համար պատմենք հետևեալ օրինակը:

— Մեզանից ամեն մէկը տեսած է սարգ, որը դրսուժ և տան միօրևէ քունջ ու պուճախում իր բարակ թելերով ցանց է գործում: Մեր տեսած սարգերից շատերը մոխրագոյն են կամ այնպիսի գոյն ունեն, որ հազիւ կարելի է հողից զանազանել: Սարգը իր ցանցը կամ ոտայնը պատրաստում ու քաշուժէ պատի արանքը մի այնպիսի տեղ, որ դժուար է նրան օրոշել պատի կամ հողի գոյնից: Խղճուկ ճանճերը գալիս ցանցի վրայ կանգնում են թէ չէ, իսկոյն բարակ թելերը ճանճի ոտքերին փաթաթուելով՝ էլ չեն թողնում թռչելու. ճանճը արգէն բանտարկուած է: Սարգը գուրս է գալիս իր թագ կեցած տեղից, բռնում է որսին և ծծումէ նրա հիւթը:

Բացի դրանից կալ սպիտակ սարգ էլ, որը բաց դեղին ու սպիտակ ծաղիկների մէջ է պատրաստում իր ցանցը և ծաղկի մի պուճախը քաշուժելով սպասում է որսի: Երկուսն էլ շատ յարմար կերպով են առաջ տանում իրանց գործը:

Եթէ սպիտակ սարգը սև պատի և առհասարակ մթնազոյն առարկաների, կանաչ աերևների վրայ

բնակուէր, իսկոյն աչքի կ'ընկնէր. ճանճերն ու միջատները առանց դժուարութեան նրան տեսնելով՝ պիտի փախչէին. նա չէր կարող այնքան ճանճեր բռնել, որքան նա կարող է բռնել սպիտակ ծաղկի մէջ:

Մենք տեսանք, որ մոխրագոյն սարգն էլ իր գոյնին նման տեղում է ապրում: Սրան էլ ձեռնուտու չէ սպիտակ և ուրիշ տեսակ գոյների վրայ բնակուել:

Ոչ թէ միայն սարգերն են այսպէս անում, այլ շատ կենդանիներ: Որպէս աչքի ընկնող օրինակ կարելի է յիշել թռչուններից ու ձկներից միջանիսին:

Իւրաքանչիւր մարդ շատ լաւ տեսած կրլինի, որ ձկներից շատերը իրանց գոյնով քիչ են զանազանուում ջրի յատակից կամ աւազի թուխ գոյնից: Վտանգաւոր դէպքերում և կամ որս անելիս նրանք թաղուում են աւազի մէջ կամ մրտնուժեն քարերի արանքը, այնպէս որ էլ դժուար է նրանց տեսնել: Կեռ շատ անգամ ինքներս մի օրևէ կուճ եկած գորտ չենք կարողացել զանազանել մի կտոր քարից, հողի կոշտից և կամ կանաչից:

Ծառերի բուճների մէջ ապրող և արտերում բուճ դնող թռչուններն էլ մի տեսակ մոխրագոյն փետուրներ ունին, այնպէս որ հազիւ կարելի է

զանազանել ծառի կեղևից ու գետնից: Եթէ շատերս չենք տեսել, գոնէ լսել ենք, որ կանաչագոյն փետուրներ ունեցող թռչուններ էլ կան: Երբ սրանք ծառի վրայ են կանգնած, դժուար է նրանց որոշել տերևներից: Այստեսակ հազարաւոր ու միլիոնաւոր օրինակներ կան բնութեան մէջ: Երկար ու բարակ դրանց մասին խօսելը մեզ շատ հեռուն կը տանէր. միայն այսքանը կարելի է ասել, որ կենդանիների մարմնի արտաքին գոյնը շատ է պաշտպանում նրանց: Մէկ կողմից իրանց թշնամուն չեն երևում, իսկ միւս կողմից էլ որսին խափ տալով՝ կարողանում են առատ առատ որս անել, ինչպէս արդէն մենք տեսանք սարգի օրինակից:

Ընդհանրապէս պէտքէ աչքի առաջ ունենալ և այն հանգամանքը, որ կենդանիների մարմնի գոյնը մեծ կախում ունի բնակութեան տեղից ու կլիմայից: Օրինակ կարող են վերցնել մարդկանց տաք կլիմայում ապրող մարդկանց մազերը թուխ ու կաշու գոյնը աւելի սև է լինում, քան ցուրտ երկրներում ապրողներինը: Եթէ այժմ Կովկասցիներս սև մազեր թուխ կաշի ունինք, իսկ ռուսները շէկ մազեր ու աւելի սպիտակ կաշի, դրա գլխաւոր պատճառներից մէկն էլ կլիման ու տեղն է:

Բայց մեր նպատակը չէր կենդանիների ար-

տաքին գոյնի մասին խօսել, որը ոչ միայն մեծ դեր է խաղում ինքնապաշտպանութեան գործում, այլ ահագին նշանակութիւն ունի էգի ու որձի ընտրութեան համար էլ, հապա ուղեցինք համառօտ կերպով ցոյց տալ, սր տեղին յարմար գոյն ունենալ և հէնց իր գոյնին համեմատ տեղում բնակուել շատ տարածուած բնական երևոյթ է կենդանիների մէջ: *ճղայլ քոնի պղմանորդի մէջ*

Հիմա դառնանք այստեղ մէջ բերած սարգի օրինակին ու հարցնենք. Ո՞վ գիտէ, թէ որքան սարգեր զուր տեղը անլայտացել ու ոչնչացել են, որոնք չեն կարողացել իրանց գոյնին յարմար տեղում ապրել. այդ տեսակները կամ շուտով ընկել են իրանց թշնամու ճանկը և կամ բաւականաչափ որս չգտնելով՝ քաղցածութիւնից մեռել ու չեն կարողացել սերունդ թողնել: Ապրել և սերունդ են թողել նրանք, որոնք բնակուել են իրանց գոյնին համապատասխան տեղում: Սկզբում սրանք այդ բոլորը կատարել են հասկանալով ու մտածելով, բայց միևնոյն բանը հազարաւոր տարիների ընթացքում կրկնուելով և ժառանգաբար սերունդից սերունդ անցնելով՝ դարձել է մի տեսակ սովորութիւն: Երբ մի բան սովորութիւն է դարձած, էլ կարիք չկայ երկար ու բարակ մտածելու. այդ դէպքում դադարում է հասկացողութիւնը: Մեզ շատ լաւ օրինակ կարող է լինել

ջահել սարգը. սա դեռ ոչ մի փորձառութիւն չունի. բայց էլի բաւականին յարմար ու ձեռն- առ կերպով է առաջ տանում իր գործերը: Ուրեմն շատ պարզ է, որ ջահել սարգը վարւում է ծնողներից ժառանգած սովորութեան համեմատ: Ահա այս սովորութեանը կամ բնական ձգտումին ասում ենք քնաղբ (ինստինկտ):

Ընթերցողները թո՛ղ չկարծեն թէ բնազդը մի անփոփոխ բան է կամ թէ չէ՝ սարգը և առհասարակ ուրիշ կենդանիներ կառավարւում են լոկ բնազդով. ոչ երբէք: Մենք տեսանք, որ բնազդը շրջապատ հանգամանքներից առաջացած ու ժառանգաբար սերունդից սերունդ անցած բնական ձգտում է. երբ փոխուին հանգամանքները, շատ թէ քիչ փոխւում է նոյնպէս բնազդը. մինչև անգամ ծայրահեղ դէպքերում կարող է կամաց կամաց ոչնչանալ: Օրինակ եթէ փոխենք սենեակի պատերի գույնը, որ էլ յարմար չէ սարգին, իսկոյն նա թողնում, հեռանում է իրան ձեռնտու մէկ ուրիշ տեղ. այս բանը կատարում է նա մտածելով ու հասկանալով: Որքան էլ բնազդը գոյութիւն ունենայ, բայց դարձեալ ամեն մի կենդանի իր հասկացողութեան չափով զանազան հանգամանքներում վարւում է զանազան կերպով:

2. ՄԵՐԳԻԿ ԷԼ ԲՆԱԶԳ ՈՒՆԻՆ:

Այս հարցին պատասխանելու համար մէջ բերենք մի շատ հասկանալի օրինակ:

— Երբ երեխան նոր է ծնւում, նա կատարելապէս կարող է մօր կաթը ծծել. մանուկը կատարում է այս գործողութիւնը գուցէ աւելի ճարպիկ կերպով, քան մի հասակաւոր մարդ: Չնայած դրան՝ մանուկը չի կարող ինքն իրան հաշիւ տալ այդ բարդ գործողութեան համար: Ուրիշ կերպ ասած նա ծծում է մօր կաթը բնազդաբար: Սա արդէն հազարաւոր դարերի ընթացքում ժառանգաբար սերունդից սերունդ անցնելով՝ հասել է մեզ և շարունակաբար անցնելու է:

Մի կողմն թողնելով ուրիշ շատ օրինակներ, լիշենք մէկ ուրիշն էլ: — Մեզանից իւրաքանչիւրը մութ սենեակում մենակ լինելիս վախ է ըզգում: Գիշեր ժամանակ դուրս գալ, մութ անտառով ճանապարհորդել, մութ փոսերի մօտով



անցնել, էլի վախ ու սարսափ է ընկնում մեր սիրտը: Գուցէ շատերը կարծեն, թէ այդ վախը մեր մէջ առաջացել է միմիայն շրջապատ հանգամանքներից: Այո՛, մեզ շրջապատող հանգամանքները մեծ նշանակութիւն ունին, բայց նրանք չեն կարող լինել միակ պատճառը: Հէնց եթէ վտանգի վրայ դեռ հասկացողութիւն ու գաղափար չունեցող մանուկը մենակ մուտ սենեակ ընկնի, շատ կարելի է, որ նա էլ վախ ըզգայ: Այս բանը դժուար և համարեա՛ անկարելի է ուղղակի հաստատել, որովհետեւ փորձի ենթարկուող մանուկը չի կարող իր հետ պատահած փոփոխութիւնը պատմել: Միայն մեզ հետ պատահած դէպքերով կարելի է հաստատել, որչափ էլ մարդ հասկանայ, որչափ էլ համոզուած լինի, թէ ամեն օր իր սպրած, իր բնական սենեակն է, ուրեմն այնտեղ ո՛չ մի վտանգաւոր, ո՛չ մի վնասակար բան չի կարող լինել, դարձեալ մուտ ու խաւար սենեակում մենակ լինելի՛ս վախ է զգում: Պարզ երևում է, որ վախը բոլորովին մեզանից անկախ է առաջ գալիս. մենք վախենում ենք այս տեսակ դէպքերում և չգիտենք ինչո՞ւ. սա էլ է բնագը, որը մի ժամանակ մարդկային ցեղի համար մեծ նշանակութիւն է ունեցել: Շատ կարելի է, որ մեր նախահայրերը հազարաւոր դարեր առաջ մուտ անտառներում, խաւար այրե-

րի ու փոսերի մէջ և առհասարակ գիշերուայ տարածամ պահուն շատ շուտ շուտ վտանգների են ենթարկուել, վնասներ են կրել, երբեմն էլ իրանց վրայ յարձակուող թշնամիներին զոհ դարձել: Դրա համար շատ հաւանական է, որ մեր նախահայրերը պէտքէ միշտ զգույշ լինէին մուտ անտառով ու այրերի մօտով անցնելիս:

Սա շարունակ կրկնուելով՝ երկար դարերի ընթացքում կամաց կամաց սկսել է ժառանգաբար անցնել սերունդից սերունդ: Հիմա թէև ամեն խաւար սենեակ, ամեն մուտ անկիւն վտանգաւոր չէ, բայց որովհետեւ մուտից ու խաւարից վախենալու տրամադրութիւնը ժառանգել ենք, հէնց, այդ հիման վրայ էլ խաւար եղած տեղում բնագզով վախ է ընկնում մեր սիրտը: Այս բնագզը մեր նախահայրերի համար շատ նպատակայարմար է եղել, բայց այժմ մեզ համար բոլորովին անպէտք է դարձած:

Բացի սրանից այդ վախը կամ մթից զգուշանալու ձգտումը հազարաւոր դարեր առաջ՝ իր սկզբնաւորութեան ժամանակ բոլորովին հասկանալի է եղել մեր նախահայրերին. այն ինչ հետզհետէ ժառագաբար անցնելով՝ այդ հասկանալի կամ գիտակից գործողութիւնը մեզ համար դարձել է քնադէ:

Այս դէպքում անհրաժեշտ է ասել, որ վա-

խի նման աւելորդ բնազդը պէտք է կամայ կամայ ոչնչացնել. դա կրթութեան գործն է, որի գլխաւոր պատասխանատուն ծնողները և ուսուցիչներն են: Սրանք պարտական են ամեն ջանք գործ դնել դրա նման անպէտք բնազդը մէջտեղից հեռացնել. բայց տարաբաղաբար միանգամայն հակառակ բան ենք տեսնում: Առանց գիտնալու շատ ծնողներ աշխույժ ու կայտառ մանուկներին վախեցնում են զանազան անուններով: Հէնց եթէ մի մուրացիկ պատառոտած շորերով է երեւացել, իսկոյն մանկանը ահ են տալիս, որ երբ չարութիւն անէ կամ չլսէ, այն ժամանակ «պատառ» կամ մուրացիկը կրգայ, նրան կրտանի: Երբեմն էլ միորեւէ փալաս ցոյց տալով կամ լուսամուտի վրայից կախելով ուզում են լացող մանկանը վախեցնել ու ձայնը կտրել տալ:

Իրանց գործը չհասկացող ուսուցիչներն էլ եթէ ոչ այդ ձևով, գոնէ աշխատում են դատարկ խօսքերով, ահ ու սարսափով կառավարել անմեղ մանուկներին: Այս ուղղութիւնը շատ վնասակար է. նախ որ մանկան մէջ եղած աշխուժն ու արիութիւնը բոլորովին կտարւումէ և երկրորդ նրա մէջ մտնում ու հաստատւում է ստախօսութեան մի գորեղ հիմք. վախկոտ ու թուլամորթ մեծացած մարդը պատրաստ է հազար ու մի տեսակ ստորութիւններ, կեղծաւորութիւններ

անել: Մեզանից շատերի վախկոտ ու փալաս բնաւորութեան գլխաւոր պատճառներից մէկն էլ այդ տեսակ կրթութիւնն է: Կրթութիւնը փոխանակ աշխատելու անպէտք դարձած բնազդը ոչնչացնել, ընդհակառակը անգիտակցաբար աւելի ոյժ է տալիս նրան: Դուք, ծնողներ, ուսուցիչներ, եթէ ուզում էք ձեր, ձեր զաւակների և ապագայ սերունդի լաւ ու կանոնաւոր վիճակը, պարտաւոր էք ուշադրութիւն դարձնել և գէն շարտել այդ սխալ ուղղութիւնը:

Այսպէս մենք տեսնք, որ մարդիկ էլ ունին բնազդ և հէնց անպէտք դարձած մասը մեզ առիթ տուեց բաւականին երկար խօսելու կրթութեան մի որոշ ու վնասակար ձևի մասին:

### 3. ԿԵՐԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ:

Կենդանիների բնազդի մասին առանձին առանձին խօսելուց առաջ հարկաւոր է մի քանի խօսք ասել կերակուր ընտրելու համար:

Սիրելի ընթերցող, մի վայրկեան մեզ հարց տուել ենք, թէ ինչպէս մեր նախահայրերը կա-

մաց կամաց հազարաւոր տարիների ընթացքում միլիոնաւոր բոյսերի ու պտուղների միջեց ընտրել են իրանց համար որպէս կերակուր հէնց այն տեսակները, որոնք վնասակար չեն: Չէ որ շատ բոյսեր ու պտուղներ ոչ միայն անպէտք են, այլ թունաւոր:

Առանց զէտուղէն ընկնելու տեսնենք, թէ այժմ ինչպէս ենք վարուում մեր սովորական կերակուրների հետ: Առողջ մարդը չի կարող ուտել որդնոտած միս, փչացած բոյսեր ու պտուղներ և այլն. որովհետև նրանց հոտն ու համը մեզ զգուանք են պատճառում. միևնոյն բանը կարելի է ասել խմիչքների համար. ապա ուրեմն ուտում և խմում ենք այն, ինչ որ մեզ դուր է գալիս: Իսկ բնական վիճակի մէջ առողջ մարդու և կենդանու համար ինչ որ դուր է գալիս, այն էլ օգտակար է. ընդհակառակը դուր չեկած բաները վնասակար են: Այն, գուց է շատերը մեծ իրաւունքով ասեն, որ դուր գալը դեռ մի լաւ չափ չէ, քանի որ մարդիկ ծխում են, օղի, գինի և ուրիշ խմիչքներ են գործածում. սրանք թէև դուր են գալիս, բայց այսպէս թէ այնպէս ահագին վնաս են տալիս նրանց:

Մեր նպատակը չէ խօսել, թէ ծխախոտը որքան վնասակար է մարդու առողջութեանը և թէ օղի, գինի, գարեջուր և առհասարակ ոգե-

լից խմիչքներն ի՞նչ չափով գործածելիս կարող են մարդուն օգուտ տալ. իսկ ընդհակառակը չափը անցկացնելիս սարսփելի կերպով քայքայում ոչնչացնում են մարդու առողջութիւնը. կրկնում ենք, այդ բոլորը մեր նպատակից դուրս է: Միայն մեզ համար հետաքրքիրը այն է, որ երբ առաջին անքամ երեխային օղի կամ գինի ենք տալիս խմելու, նա իր ամբողջ դէմքը թթուացնելով զգուանք է արտայայտում: Շատ պարզ է, որ նրան դուր չէ գալիս և իսկպէս վնաս էլ է նրան: Ընդհանրապէս միևնոյն բանն են անում խմիչքին անսովոր մարդիկ. Չնայած դրան, քիչ քիչ խմացնելով՝ կամաց կամաց կարելի է երեխային էլ վարժեցնել, ինչպէս արդէն հասակաւորներից շատերը վարժ ու սովոր են:

Ապա փորձեցէք միևնոյն երեխային քաղցր բան տալ. նա ոչ մի զգուանք ցոյց չի տալիս. ընդհակառակը նրա երեսի վրայ երևում է բաւականութեան ու դուր գալու նշան: Քաղցր բանը երեխային դուրեկան ու օգտակար է և նա մեծ ախորժակով է ուտում:

Գալով ծխախոտին, ամեն մի ծխող կարող է իր անձնական փորձից գիտնալ, թէ առաջին անգամ ծխել սկսելիս մարդու առողջութիւնը ինչպէս զգուանք է:

Մի կողմ թողնելով այն բանը, որ կարելի է

1002



վարժութիւններով կամաց կամաց սովորել քիչ թէ շատ վնասակար բաներ գործածելու, հաստատ մնում է այն ճշմարտութիւնը, որ մեծ մասով դուրսէն օգտակար է. իսկ ընդհակառակը վնասակար բանը դուր չի գալիս: Ահա այս կերպով են վարուել մեր նախահայրերը հազարաւոր տարիներ առաջ. դուր եկածը ընտրել, ջոկել ու պահել են. դուր չեկածը դէն են շարտել: Միևնոյն կերպով արել և անում են բոլոր կենդանիները: Օրինակ բուսակեր կենդանիները արածելու ժամանակ մեծ մասով այս և այն բոյսի հոտից ու համից իսկոյն ճանաչում են իրանց կերակուրները. դուր եկածը ուտում են, անդուրեկանը բաց թողնում: Շատ քիչ դէպքերում են սխալում նրանք. կալելի է ասել, որ գլխաւորապէս հիւանդ ժամանակ կարող են կենդանիները վնասակար բաներ ուտել:

Այսպէս մենք տեսանք, որ կերակուր ընտրելիս բնական կերպով դուրեկանութիւնը առաջին տեղն է բռնում: Մարդիկ հետզհետէ առաջ գընալով չէին կարող միայն դրանով բաւականանալ. մանաւանդ թէ փոխուել են հանգամանքները և թէ մեր հոտառութիւնը այնպէս սուր չէ, ինչպէս մեր նախահայրերինն էր հազարաւոր տարիներ առաջ և կամ ինչպէս այժմ կենդանիներինն է: Հաւանորէն կիսավայրենի ժողովուրդների հոտառութիւնը

աւելի սուր է, քան մերը. ընդհակառակը մենք էլ աւելի սուր հոտառութիւն ունինք, քան թէ շատ աւելի քաղաքակրթուած եւրոպացին: Բայց մարդիկ այժմ կարող են զանազան միջոցներով իմանալ օգտակար ու վնասակար նիւթերը: Ինչ ուզում է, թո՛ղ լինի. կերակուրի հոտն ու համը մեզ համար էլ մեծ նշանակութիւն ունի դուրեկանութիւնը բնական կերպով դարձեալ ահագին տեղ է բռնում:

Բացի դրանից կերակուր ընտրելիս երբեմն պատահում են ուշադրութեան արժանի ուրիշ դէպքեր էլ:

Ամեն մի մարդ գիտէ, որ աղաւնիները ուտում են յատերի վրայ քսած կիրը և կամ հատիկների հետ կուլ են տալիս աւազ: Կիր ու աւազ չեն կարող կերակուր լինել, բայց նրանք հարկաւոր են ձուլի կեղևի ու ոսկրի կազմութեան համար:

Շատ քիչ դէպքերում մարդիկ էլ կենդանիների նման այդ տեսակ ձգտում են ցոյց տալիս: Օրինակ՝ յղի կանայք երբեմն կաւիճ կամ կիր ուտելու արտօքակ են ստանում. այն ինչ ոչ յղի ժամանակ բոլորովին անտանելի ու զգուելի կըլինէր: Նրանք այդպէս են վարում, սրովհետեւ գեռ չըծնուան մանկան ոսկրների կազմութեան համար պէտքական են այդ նիւթերը: Ընդհանրապէս

կենդանիներ ու մարդիկ որոշ հանգամանքներում այդպէս են անում ոչ թէ հասկանալով ու մտածելով, այլ բնագրով: Սա էլ հազարաւոր տարիների ընթացքում ժառանգաբար սերունդից սերունդ անցած բնական ձգտում է:

Ընթերցողները թող չմտածեն, թէ ուրեմն ոսկրների կազմութեան համար ուղղակի այդ տեսակ նիւթեր ուտելու կարիք կայ, ոչ երբէք: Մեր և առհասարակ կենդանիների ոսկրների համար պէտքական կիրը արդէն գտնւում է բուսական ու միւս տեսակ կերակուրների մէջ: Իրա համար էլ չլի կանայք շատ քիչ դէպքերում են ցոյց տալիս այդ տեսակ ձգտում: Իսկ եթէ երբեմն մարդիկ ու կենդանիներ ուտում են անպէտք և աւելորդ բաներ, դա մեծ մասով առաջ է գալիս հիւանդոտ ու անբնական դրութիւնից:

Այժմ հասկանալի պէտք է լինի, թէ ինչ կերպով է կատարւում կերակրի ընտրութիւնը: Հիմա էլ անցնենք—տեսնենք կենդանիների միւս գործերը:

#### 4. ԿԵՆՊԻՆՆԵՐԻ ԲՈՒՆ ՇԻՆԵԼՈՒ ՎԱՐՊԵՏՈՒԹԻՒՆԸ:

Ինչո՞ւ մենք տուն ու տեղ ենք լինում. շատ հասկանալի է. պարապ ժամերին այնտեղ հանգիստ գտնել, աշխատելիս յարմարութիւններ ունենալ, գիշերը ապահով քնել և վերջապէս մեզ ու մեր զաւակներին պաշտպանել, անձրևից, ցրրոտից, արևից, և այլն:

Միևնոյն բանը անում են կենդանիները. նրանք բուն են շինում թէ իրանց և թէ ձագերին պաշտպանելու համար: Ուրեմն մենք տեսնում ենք, որ բնակարան ունենալու ձգտումը ամուր կապուած է ինքնապաշտպանութեան և սերունդի հոգատարութեան հետ: Սա մի ընդհանուր օրէնք է և՛ մարդկանց, և՛ կենդանիների համար:

Կարիք չկայ ամեն մի կենդանու մասին, առանձին խօսել. իբրև օրինակ կը պատմենք թռչունների մասին, թէ նրանք ինչպէս են խնամում իրանց ձագերին:

Իւրաքանչիւր մարդ գիտէ, որ թռչունները

դէս ու դէն ընկնելով՝ հաւաքում են չոր խոտ, փայտի փոքրիկ կտորներ, կաւ, շոր և այդ բոլորը մէկիկ մէկիկ իրար կցելով՝ բուն են շինում: Մարդ չի կարող կանգնել ու սառնասիրտ կերպով նայել թռչունի աշխատասիրութեան վրայ, թէ նա ինչպէս իր համար բնակարան է շինում և սպաքայ ձագուկների համար օրօրօցի պատրաստութիւն տեսնում: Թռչունների բունը ուշադրութեան արժանի շինութիւն է. նա այնքան գեղեցիկ գործուած ու միմեանց հետ հիւսուած է, որ այդչափ կարճ ժամանակում մարդկային ձեռքերն էլ հազիւ կարողանային այդպիսի բուն շինել:

Երբ բունը շինում պրծնումէ, նրա տակը լցնում է փափուկ բաներ, ամենից շատ՝ մամուռ. յետոյ ձու է ածում և թուխս նստում: Չնայած որ թռչունները շատ կայտառ, շարժուն արարածներ են և բոլորովին հանգիստ մնալու սովորութիւն չունին. բայց սերունդի հոգատարութեան բնազգը այնքան մեծ է, որ շաբաթներով համարեան անշարժ թուխս են նստում:

Այդ սովորութիւնը տեսնում ենք ընտանի հաւի, բազի, սագի ու աղաւնիների մէջ էլ: Միայն զօռով կարելի է թուխս նստած թռչուններին իրանց տեղից հեռացնել. և կամ սաստիկ քաղցած ու ծարաւ պիտի լինին, որ ինքն ի-

րանց մի քանի րոպէով թողնեն — հեռանան:

Այս երևոյթը ընտանեկան կեանքի սկիզբն է և շատ խրատական, թէ ինչպէս ամեն մի կենդանի շունչ խնամք է տանում իր սերունդի համար: Երբեմն էլ այն դրութեան մէջ առաջ է գալիս ամուսնական կեանք, որովհետև արուն կամ որձը իր վրայ է առնում ծանր հոգսեր, թուխս նստած մայր թռչունին նա է կերակրում, նա է գնում ու նրա համար ուտելիք բերում: Երբ մայր թռչունը պէտք է դուրս գնայ ջուր խմելու այն ժամանակ հայր թռչունն է ձուերի վրայ նստում, որ ցրտից պաշտպանէ:

Արագիլ թռչունների ամուսնական կեանքը շատ հրաշալի է: Երբ մայր արագիլը թուխս է նստած, այդ ժամանակ հայր արագիլը մի ոտի վրայ կանգնած կտուցով թըխկթըխկացնում է, շատ կարելի է կնոջը ուրախացնելու համար. հեռանում, դուրս է թռչում միայն այն ժամանակ, երբ իր կնոջ համար կերակուր է բերելու:

Թռչունների բուն շինելն էլ բնազգ է: Պա հասկանալի կլինի հետևեալ օրինակից: Վանդակների մէջ փակուած թռչունները հէնց որ ազատ ժամանակ են գտնում, իսկոյն խոտ, փայտի կտոր և ուրիշ բաներ բերելով սկսում են իրանց արհեստական բնի մէջ մի նոր բուն էլ շինել այն ձևով, ինչ ձևով շինում են բնութեան մէջ ա-

զատ ապրող իրանց տեսակ թռչունները. չնայած որ նրանք ապրում են մարդկանց ձեռքի տակ, երբէք չեն տեսել ո՛չ իրանց ծնողներին և ո՛չ էլ ընկերներին բուն շինելիս: Դա նրանց համար մի այնպիսի գործ է, ինչպէս նորածին երեխայի համար մօր կաթ ծծելը: Սովորելու կամ տեսնելու կարիք չկայ. սրանց պարզ երևում է, որ իսկապէս բուն շինելն էլ ժառանգաբար անցած բնագր է: Դրա համար էլ ամեն տեսակ թռչուն ուրիշ ձևով է շինում իր բունը: Օրինակ՝ սարեկի և կամ ճնճղուկի բունը ձևով ու տեսքով բոլորովին զանազանում է միւսներից:

Իւրաքանչիւր բուն ունի իր առանձին յատկութիւնը և շինողի նպատակներին այնքան յարմար է, որ կարելի է զարմանալ:

Այդ կողմից շատ հետաքրքիր է հնդկական թռչուններից մէկի բունը:

Այդ թռչունը ասումէ Բայա: Օձերն ու կապիկները շատ թշնամի են նրա ձագերին ու ձուերին: Պաշտպանութեան համար Բայա-թռչունը իր բունը շինում է ծառի ամենաբարձր և բարակ ճիւղի վրայ, որտեղ գնալ սիրտ չեն անում ուրիշ կենդանիներ: Տանձի ձևով բունը քաշ ընկած է ծառից և դուռն էլ ներքեից է, այնպէս որ ներս մտնելու համար պէտք է օդի միջով թռչել. ահա սրանով կարողացել է իր թշնամիների առաջը

առնել: Միևնույն ժամանակ ընտանիքի յարմարութեան համար բունը կազմուած է երկու մասից. մէկի մէջ մայր-թռչունը թուխս է նստում, իսկ միւսում հայր թռչունը իր երգով ու շախացնում է կնոջը:

Մի ուրիշ փոքրիկ թռչուն էլ իր բունը շինում է բամբակի թփի տերևներից: Ամենից առաջ նա կտուցով թելեր է մանում բամբակից, լետոյ տերևները ծակում և այդ բոլորը միմեանց հետ կարելով՝ պատրաստում է իր բնակարանը:

Որքան էլ բուն շինելը բնագր լինի, բայց էլի զանազան հանգամանքներում կենդանին իր խելքի ու հասկացողութեան չափով փոփոխութիւններ է մտցնում և նոր յարմարութիւններ ստեղծում իր բնակարանի համար: Հասակ առած ու փորձուած կենդանին աւելի ճարպիկ կերպով կը շինէ իր բունը, քան թէ անփորձ ջահիլը:



### 5. ԸՆԿԵՐԱԿԱՆ ԲՆԱԳԻ:

Մեզանից ո՞վ չէ տեսել մրջուկների ու մեղունների ընկերական կեանքը, նրանք միասին են ապրում, միասին աշխատում և միասին են վայելում: Ո՞ւմ յայտնի չէ ընտանի հաւի, բաղի ու սագի ընկերական կեանքը տեսէք, տասնեակ հաւեր միմեանց հետ են ապրում, սրանց վրայ իշխում է աքաղաղը: Բայց կան կենդանիներ, որոնք չեն սիրում խմբերով ապրել. գորեղ ու հպարտ առիւծը թող չէ տալիս իր պատուին ուրիշների իշխանութեան տակ լինել: Իրա համար նա ժամանակաւորապէս ընկերութիւն է անում իր կնոջ ու ձագերի հետ. սրա ընկերական կեանքը կազմում է ընտանեկան նեղ շրջանը, ուր միայն ինքրն է իշխողն ու թագաւորողը:

Մի տեղ ընկերական կեանքը շատ նեղ է, ինչպէս առիւծինը, մէկ ուրիշ տեղ աւելի ընդարձակ: Ընտանի թռչունների, մանաւանդ մեղուների ու մրջուկների ընկերական կեանքը այնքան

ընդարձակուել է, որ շատ նման է մարդկային հասարակութեանը:

Բնութեան մէջ ազատ ապրող թռչուններն էլ մեծ մասով առանձին առանձին ընտանեկան կեանք են անցկացնում: Բայց երբ ձմեռը վրայ է հասնում և երբ նրանք ստիպուած են թողնել ու հեռանալ տաք երկիրներ, այն ժամանակ միմեանց գլխի են հաւաքւում, կազմում են մի ամբողջ հասարակութիւն: Ահա գողթելու կարիքը ստիպում է նրանց մի որոշ ժամանակ հասարակական կեանք անցկացնելու:

Եթէ մենք մի փոքր լաւ նայենք մեր չորս կողմը, կըտեսնենք, որ դարձեալ կարիքն է ստիպել մարդուն ինքնապաշտպանութեան ու սերունդի հոգատարութեան համար ընկերական և հասարակական կեանք անցկացնել: Հազարաւոր տարիների ընթացքում դրա օգուտը զգալով և ճանաչելով՝ մարդիկ շարունակ ձգտել են ընկերական կեանքով ապրել. այդ ձգտումը ժառանգաբար սերունդից սերունդ անցնելով՝ դարձել է մեզ համար անհրաժեշտ կարիք և ամենաօգտակար բնագոյ: Ո՛չ մի առողջ մարդ չի կարող բոլորովին մենակ ապրել. մարդու սիրտը տրաքւում է առանց ընկերական ու հասարակական կեանքի. մեծ մասով հիւանդոտներն են փախչում, խոյս տալիս հասարակութիւնից: Ինչ ասել կ'ուզէ, որ մարդիկ



հետզհետէ առաջ գնալով՝ աշխատում են խելքով ու գիտակցաբար աւելի հաստատել և աւելի ընդարձակել այդ բնագոյրը:

Հէնց միևնոյն բանը կարելի է ասել քիչ թէ շատ ընկերական կեանք անցկացնող կենդանիների համար: Ընկերական բնագոյրը կարող է մի տեսակ կենդանիների մէջ զօրեղ ու ընդարձակ լինել, իսկ միևսի մէջ՝ քիչ: Դա միևնոյն է. ամեն մէկը իր կարիքի համաձայն է վարուում: Կենդանիների ինքնապաշտպանութեան ու սերունդի հոգատարութեան ձգտումը երբեմն ստիպում է նրանց բոլորովին հասարակական կեանք անցկացնել և երբեմն էլ ժամանակաւորապէս միանալ:

Օրինակ, ինչպէս գայլերը, նոյնպէս բորենիները իրար հետ միանում են որս անելու նպատակով: Երբ նրանք որս անում — պրծնում են, իսկոյն բաժանւում են միմեանցից և մինչև անգամ մէկ մէկի թշնամի են դառնում: Ինչ ուզում է, թող լինի, միայն մենք այստեղ տեսնում ենք որ կերակուր ճարելու կարիքը ստիպում է կարճ ժամանակով ընկերութիւն անել:

Վայրի ձիերն էլ իրար հետ միաբանւում, մի ընկերութիւն են կազմում այն ժամանակ, երբ կաթաղի կենդանիներ նրանց վրայ են արձակւում: Իսկոյն ձիերը հաւաքուելով՝ կտր շարւում, իրանց մէջն են առնում էգ ձիերին ու ձագերին և ըս-

կուում են թշնամիներին քացի տալ, խածել ու դէն քշել: Վտանգը — անցնում է թէ չէ ձիերը դարձեալ բաժանւում են իրարից: Շատ հասկանալի է, սր սրանց ընկերական վարմունքը շատ աւելի բարձր և օրինակելի է, քան գայլերինը:

Պակաս հետաքրքիր չէ հարաւային Ամերիկայում ապրող ճնճուկների կեանքը նրանք հազարներով հաւաքւում մի բարձր ծառի չորս կողմը և նրա վրայ պատրաստում են ծածկոց: Հեռուից ծառը իր ծածկոցով երևում է ինչպէս մի բաց արած հովանոց. ահա սրա տակ ամեն մի թռչուն իր համար շինում է առանձին բուն: Նրանք ունին հասարակութեան աշխատանքով պատրաստած մի ծածկոց, դրա համար էլ ասւում են հասարակակցայիններ: Բայց իսկապէս այդ թռչունները հասարակապետական կեանք չեն անցկացնում. մէկը շատ ունի, միւսը քիչ, դա միևնոյն է նրանց համար. նրանք միայն օգտւում են հասարակութեան տեղից, իսկ ամեն մէկը առանձին վեր առած ապրում է նեղ ու փակ ընտանեկան կեանքով:

Ընդհակառակը որտեղ ընկերութեան բնագոյրը դրանից աւելի է առաջ գնացել, այնտեղ կարելի է տեսնել, որ կենդանիները ո՛չ միայն իրանց բնակարանները չեն փակում հարևանների առաջ, այլ և անցքերով կապում են: Այս տեսակ են անում

ճագարները. եթէ երկու ճագարի միմեանցից քիչ հեռու բուն փորել տանք, շատ շուտով նրանք գետնի տակից մի անցքով միացնում են բները: Այն, կարծէք, դրսի տեսակցութիւնը բաւական չէ. պէտք է որ բներն էլ միացած լինին:

Այդ տեսակ սովորութիւն եղել է մարդկանց մէջ էլ: Հին ու անապահով ժամանակներում աշխատել են փոքրիկ անցքերով տները կապել միմեանց հետ, որ վտանգաւոր դէպքերում իմաց տան, մէկ մէկի օգնութեան կանչեն: Իհարկէ այժմ դրան կարիք չկայ. եթէ չասենք, բոլորովին վերջացել է այդ սովորութիւնը, դոնէ վերջանալու վրայ է:

Մենք տեսանք, թէ որքան մեծ նշանակութիւն ունի ընկերական բնազդը. այստեղ նորից կրկնում ենք, որ ընդհանրապէս սերունդի և ինքնապաշտպանութեան ձգտումը առաջ է բերել ու շարունակ զարգացնում է թէ մեր և թէ կենդանիների ընկերական կեանքը:



## 6. ԿԵՆՊՈՆԻՆԵՐԻ ԳՆՂԹԵԼՈՒ ԲՆԱԶԳԸ:

Գաղթականութեան բնազդը երևում է թէ՛ ցամաքի վրայ և թէ՛ ջրում ապրող կենդանիների մէջ: Այդ բնազդը որքան էլ տարածուած երևոյթ չլինի, բայց դարձեալ ո՞վ չէ լսել թռչունների գաղթելու մասին, ո՞վ չէ տեսել նրանց ճանապարհորդութիւնը: Սրանց գնալն ու վերադարձը շատ անգամ բաւականին ճիշտ կերպով մեզ ցոյց են տալիս տարուայ եղանակների փոփոխութիւնը:

Վերևում ասացինք, որ թռչունները գաղթելիս խումբ խումբ միանում, ահագին ընկերութիւն են կազմում. հիմա էլ պիտի աւելացնենք, որ երբ նրանք տեղ հասնում— պրծնում են, իսկոյն ցրւում և առանձին առանձին են ապրում:

Իւրաքանչիւր մարդ տեսած կըլինի, թէ ինչպէս ամեն մի տեսակ թռչուն իր ճանապարհորդութեան կարգ ու սարքն ունի: Վայրի սազերն ու բազերը եռանկիւնի են շալւում ու այնպէս ճանապարհ ընկնում: Ծիծեռնակները իրար յետև-

ւից շարան շարան մի շղթայ են կազմում:

Երբ աշունը գալիս է, թռչունները խուժք խուժք թողնում հեռանում են դէպի հարաւ, դէպի տաք երկիրներ, որտեղ կարող են կերակուր ձարել: Իսկ երբ ձմեռը անցնում է, գալիս է գարունը, խեղճն գարնան հետ միասին նորից շարան շարան վերադառնում են: Այսը բոլորը կատարում է մի այնպիսի ձգտումով, որ հազարաւոր տարիների ընթացքում փորձերի հետ միացած ժառանգաբար սերունդից սերունդ անցնելով՝ դարձել է բնագր: Ո՛րքան թռչուններ կորած ու ոչնչացած պէտք է լինին, որոնք ձմեռուայ գալը չեն կարողացել իմանալ և դրա համար ցրտից ու կերակրի պակասութիւնից մեռել կորել են. միայն ապրել ու սերունդ են թողել այն թռչունները, որոնք կարողացել են ձմեռուայ անյարմարութիւններից ազատուել և գաղթել տաք երկիրներ. ահա այս բանը սերունդից սերունդ կրկնուելով՝ դարձել է մի գորեղ բնագր:

Իսկապէս այնքան գորեղ է այդ բնագրը, որ վանդակում փակուած թռչուններն էլ նրանց գաղթելու ժամանակ շատ անհանդիստ են լինում. թափահարում են թևերը, գարկուում են վանդակի ճաղերին. սիրտերը տրաքւում են, ուզում են թռչել գնալ, բայց ճար չկայ: Վանդակի մէջ փակուած թռչունի համար բոլորովին նշանակու-

թիւն չունի, արդեօք ձմեռ է, թէ գարուն, քանի որ մարդիկ կուտ ջուր են տալիս նրան: Բայց ինչ կարող է անել թռչնիկը. անշուշտ դարերով ժառանգաբար եկած բնագրը հէնց եղանակի փոփոխութիւնից պէտք է իր ժամանակին նրա մէջ գարթնի: Այո՛, ոմանք սրան կոյր բնագր են ասում. այդ տեսակ կոյր բնագր մեղանում էլ կայ. միայն բաւական է լիշել, որ մթութեան մէջ վախ ենք զգում. տանը մենակ լինելիս դարձեալ վախ է անցնում մեր սմբողջ մարմնով, թէև շատ անգամ գիտենք և համոզուած ենք, որ ոչինչ չկայ:

Առհասարակ գաղթելու բնագրը մեծ չափով երևում է թռչունների մէջ. բայց միևնոյն սովորութիւնը ունին միքանի ուրիշ կենդանիներ էլ: Օրինակ, կապիկները ահագին խմբերով գաղթում, թափառում են մէկ անտառից միւսը: Այս գաղթականութիւնը բոլորովին կապուած չէ տարուայ եղանակների հետ, այլ աւելի կերակուր ձարելու համար է: Կապիկները գաղթում են այն ժամանակ, երբ իրանց ապրած տեղում էլ չեն կարող սնունդ գտնել:

Տաք երկիրներում, ինչպէս Հնդկաստանում կան մի տեսակ գաղթող մրջուներ. սրանք այնպիսի մեծ խմբերով են գաղթում, որ մարդու աչքը կարածի չափ անցած զաշտերն ու արտերը սև

ծածկում, աւերում և ոչնչացնում են: Երբ նրանք հանդիպում են մարդկանց բնակարանների, իսկոյն ներս են թափւում, բռնում են տան ամեն մի բունջ ու պուճախը: Բնակիչները ստիպուած են լինում առժամանակ իրանց տունն ու տեղը թողնել և հեռանալ, մինչև որ մըջուները դուրս գան: Սրանք որքան էլ վնաս են տալիս մարդկանց, բայց միևնոյն ժամանակ տան մէջ եղած ցեցերին ու մկներին ոչնչացնում են. դրա համար Հնդկաստանի բնակիչները երբեմն այնքան էլ տոբոհ չեն իջնումների այցելուների:

Հէրինգ (տառեխ) ասուած ձկները տարուայ որոշ ժամանակում միլիոններով երևում են ծովի ափին մօտիկ ջրերում. նրանց երևալն ու անյայտանալը այնքան կանոնաւոր է կատարւում, որ մարդ կարող է այդ երևոյթի վրայ համարեա՛ այնպէս վստահել, ինչպէս մարդ վստահում է արեգակի մայր մտնելու և ծագելու վրայ:

Նոր քննութիւնները ցոյց են տալիս, որ հէրինգ ձկները չէ թէ հեռու տեղերից են գալիս, այլ ծովի յատակից են բարձրանում դէպի ափը ձուեր ածելու:

Ահա տեսնում ենք, գաղթելու բնազդը մէկ տեսակ կենդանիների մէջ կատարւում է այս ձևով, միւսների մէջ ուրիշ ձևով ու նպատակով. բայց մեծ մասով կապուած է կերակուր ճարելու ձգտուծի հետ

և ընդհանրապէս դարձեալ մեծ նշանակութիւն ունի սերունդի և ինքնապաշտպանութեան համար:

7. ԱՐԸԳՈՒԻ ԳՐԸԹԵՒԻ ԲՆԱԳՐ:

Գաղթող թռչունները շատ արագ են թռչում և նրանց ճանապարհորդութիւնը բաւականին երկար է քաշում: Արագիլները գաղթելիս մի ժամում անցնում են մօտ երեսուն մղոն. իսկ մղոնն էլ եօթը վերստ հաշուելով, բոլորը միասին է՛անէ 210 մլրսս: Մարդ սովորական քայլերով կարող է մէկ ժամում գնալ 5 մ մլրսս. ուրեմն եթէ մարդ անդադար զնայ, արագիլի մի ժամում կտրած ճանապարհը կարող է անցնել 42 ժամում կամ մօտ երկու օրում: Գեռ սա բաւական չէ. եթէ ընդունենք, որ երկաթուղին մի ժամում անցնում է 70 վերստ (այս տեսակ արագութիւն հազիւ է պատահում), այն ժամանակ կընշանակէ, թէ արագիլը երեք անգամ աւելի արագ է գնում, քան երկաթուղին: Կամ հէնց

մէկ ժամից աւելի շուտ արագիւր կարող է թիֆ-  
լիսից հասնել Երևան, Ալեքսանդրապոլ և կամ  
Ախլցխա:

Արագիւնների ճանապարհորդութեան խումբը  
շատ անգամ այնքան մեծ է լինում, որ չնայած  
կայծակի պէս արագ թռչելուն՝ էլի մարդ երկար  
ժամանակ տեսնում է նրանց կարաւանի ծայրը:  
Նրանք չէ թէ իրար յետեւից մի մի հաստ շար-  
ուած են լինում, այլ ահագին ու ընդարձակ շար-  
քերով:

Այս թռչունների գաղթականութեան մէջ մի  
հետաքրքիր բանն էլ այն է, որ ոչ միայն ուրիշ  
գաղթող թռչունների նման մէկ տեղից միւսն են  
գնում սնունդ ու տուք եղանակ ունենալու համար,  
հասցա նրանք մշտական ու կանոնաւոր բնակու-  
թեան տեղ ունին մէկը հիւսիսում իսկ միւսը  
հարաւում: Զմեռ ժամանակ հիւսիսային երկրնե-  
րից գնում են հարաւ. ընդհակառակը գարնանը  
վերադառնում են հիւսիս միւսնոյն տեղը:

Եթէ արագիւր իր բունը պատրաստել էր մի-  
որեւէ գիւղական յարգանոցի կամ տան կտուրի վրայ,  
հազարաւոր մղոն կտրում, անցնումէ. աջ ու ձախ  
է թողնում շատ գիւղեր, միմեանց նման շատ  
տեղեր, համարեա՞ միշտ առանց սխալուելու հաս-  
նում է հայրենիք և գտնում իր բունը:

Վերադառնալ իր ասուած բունը, նորոգել և

դարձեալ այնտեղ ապրել՝ ուշագրութեան արժանի  
երևոյթ է: Սա ոչ սերունդի և ոչ էլ ինքնապաշտ-  
պանութեան բնագոյի հետ կարող է այնքան կապ  
ունենալ. որովհետև ճանապարհին կարող էր այդ  
տեսակ բներից մէկն ու մէկի մէջ ապրել. բայց  
եթէ այդպէս չէ անում, այն ժամանակ պարզ է,  
որ արագիւր իր սեպհականութիւնն էլ է ճանա-  
չում: Եթէ վերադառնալիս մի ուրիշ արագիւրի  
գտնէ իր բնի մէջ, սարսափելի կռիւ է բացւում.  
այս կռուի մէջ կամ իր թշնամուն պէտքէ սպանէ  
և կամ ինքը պիտի սպանուի:

Հետաքրքիր է արագիւնների մէկ ուրիշ սովո-  
րութիւնն էլ: Երբ ձմեռը մօտենումէ, նրանք  
խումբ խումբ միմեանց հանդիպելով՝ կազմում են  
մի ահագին կարաւան միւս հայրենիքը գաղթելու:  
Միայն ճանապարհ ընկնելուց առաջ ամբողջ հա-  
սարակութիւնը վար է իջնում գաշտի վրայ, կրոր  
շարւում և կազմում է մի մեծ շրջան, որի մէջ  
տեղում կանգնած մնում են միքանի արագիւններ:  
Բաւական ժամանակ միւսները կտցահարում են  
գետնին, յետոյ յարձակուելով մէջտեղում կանգնած  
արագիւնների վրայ՝ սպանում են նրանց և խփոյն  
թռչում-հեռանում:

Միքանիսը սրան ասումեն դատաստան, որպէս  
թէ գրանով պատժում են չարագործ և մեղաւոր ա-  
րագիւններին. բայց աւելի հաւանականն է այն, որ

Թույլերին ու հիւանդներին են սպանում: զրանք առանց այն էլ երկար ճանապարհորդութիւնը չկարողանալով տանել, պէտք է կէս ճանապարհին մեռնէին:

Արագիւնները մի հատիկ չեն, ուրիշ շատ թըռչուններ էլ վերագառնում են իրանց հայրենիքն ու սեպհական բռնը:

Սիրելի ընթացող, էլ չկարծէք, թէ բնական կերպով հայրենիքի սէրը միայն մեր մէջը կայ, այլ միևնոյն բանը յատուկ է և զարգացած կենդանիներին:

### 8. ԿԵՆՊԸՆՆԵՐԻ ՎԵՐՄՈՒՆՔԸ ԹՃՆԱՄՈՒՆԵՐԻ ԴԻՄ:

Մեզանից ամեն մէկը քիչ թէ շատ գիտէ, որ իւրաքանչիւր տեսակ կենդանի զանազան միջոցներ է գործածում իրան պաշտպանելու համար: Տեսէք, կատուն բարկացած ժամանակ մէջքը ուռցնում, մազերը բիզ բիզ կանգնեցնում, ատամները բաց է անում և դեռ թշնամու վրայ չարձակուած իր այլանդակ տեսքով ուզում է վախեցնել նրան: Համարե՛ս շունն էլ միևնոյն բանն է

անում: Թռչունները- փետուրներն են բիզ բիզ կանգնեցնում ու մի տեսակ ուռչում են: Հէնց ինքներս բարկանալիս շատ անգամ բռունցք ենք բաշում, ատամներս սեղմում ու բաց անում, աչքերս չուում ենք մեր հակառակորդի վրայ վախ ազդելու: Այս բոլորը շափագանց լարմար շարժումներ են. բայց ո՛չ մենք և ո՛չ էլ կենդանիները երբէք չենք մտածում այս կամ այն դիրքը բռնելու, այլ բնական կերպով ամեն բան ինքն իրան է կատարում. դա արդէն ժառանգաբար սերունդից սերունդ անցած մի բնազդ է: Իհարկէ այդպիսի շարժումներ բոլոր կենդանիները չունին և միայն զրանք բաւական չեն ինքնապաշտպանութեան համար: Կան ուրիշ շատ միջոցներ, երբ ամեն մի կենդանի ո՛չ միայն բնազդով, այլ իր խելքի ու հասկացողութեան չափով աշխատում է զանազան հնարներ բանեցնել թշնամու դէմ: Ընդհանրապէս ինքնապաշտպանութեան միջոցները այնքան մեծ նշանակութիւն ունին կենդանիների համար, որ արժէ հազարաւոր օրինակներից գոնէ մի քանիսը լիշել:

Ազուէսը երբեմն շատ խորամանկ կերպով է ազատում իրան հալածող շներից. նա պոչը թաթախում է մեզի մէջ ու սրսկում է շան աչքերին:

Ոգնին թշնամու հետ համարե՛ս կռուի մէջ

չէ մտնում. նա բոլորովին կծկւում ու անշարժ է մնում. կարծէք, հասկանում է, թէ ոչոք չի համարձակուիլ իր փշերին ձեռք տալ:

Կան կենդանիներ, որոնք թշնամուց ազատուելու համար իրանցից բաց են թողնում անտանելի ու զղուելի հոտ. օրինակ՝ թախթաբիթի, մրջուն և այլն:

Մի տեսակ ձուկ էլ կայ, որը վտանգաւոր դէպքերում իրանից սև նիւթ է բաց թողնում, ջուրը բոլորովին պղտորում է, այնպէս որ թըշնամին էլ չի կարող նրան տեսնել:

Երբ սարդերը շատ գորեղ թշնամու են հանդիպում, իրանց ձևացնում են մեռած և ժամերով անշարժ են մնում:

Սրդէն յայտնի է, որ շատ միջատներ իրանց պաշտպանում են խայթոցով, ինչպէս օրինակ մեղուն: Օձի թոյնն էլ պաշտպանութեան միջոց է: Զորքոտանիների եղջիւրներն էլ միևնույն նպատակն ունին: Իւրաքանչիւր մարդ տեսած կրլինի, թէ ինչպէս եղներն ու գոմէշները միմեանց հետ կռուելիս եղջիւրներով են խփում:

Շատ կենդանիների համար էլ իբրև պաշտպանութեան գէնք ծառայում են ատամները, ճանկերը, շունը, գայլը և ուրիշները իրանց ատամներն են գործածում: Թռչունների կոտուցն ու ճիրանները նոյնպէս պաշտպանութեան մի-

ջոցներ են:

Այսքան օրինակները բաւական են ցոյց տալու, թէ իսկապէս կենդանիները որքան միջոցներ ու հնարներ ունին ինքնապաշտպանութեան համար:

### 9. ԿԵՆԳԱՆԻՆԵՐԻ ԽՈՐՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ:

Մինչև այժմ խօսեցինք բնազդի մասին. տեղ տեղ էլ շարունակ տեսնում էինք, թէ ինչպէս ամեն մի կենդանի մտածելով ու հասկանալով զանազան գործեր է կատարում: Սրանից յետոյ սովորելու ենք, որ կենդանիները իրանց բնազդի հետ միասին շատ աւելի խելացի և մտածուած բաներ են անում: Մեզանից ո՞վ շատ անգամ չէ զարմանում ընտանի կենդանիների, մանաւանդ շան ու ձիու խելացի վարմունքի վրայ: Նրանք մտածում, դատում և այնպէս են շարժւում. սրանց մասին կրպատմենք մի ուրիշ անգամ առանձին գրքուկով: Հիմա միքանի օրինակներով պարզենք կենդանիների խորամանկութիւնը, որը

էլի ցոյց է տալու նրանց հասկացողութեան չափը:

Ամեն մի մարդ լսած կըլինի, թէ ինչպէս աղուէսները խորամանկ ու ճարպիկ կերպով են մըտնում հաւերի բունը գողութիւն տներու:

Երբ գալլերը ուզում են ձի բռնել, միքանիսով առաջի կողմից յարձակում են նրա վրայ և անհանգիստ անում: Քանի որ նա կուռում է սրանց հետ, այն ժամանակ լետեի կողմում կանգնած գալլերը ընկնում են ձիու վրայ, բռնում են կողորդից և խեղդում:

Նոյնպէս մեծ խորամանկութիւն են բանեցնում ոչխար գողանալիս. միքանի գալլեր առաջ ու առաջ զնում են հօտի շանը խեղդելու և կամ նրա հետ կռիւ կանգնելու: Այդ բոլորին երբ շունը միքանիսի հետ կռիւ է անում, միւս կողմից գալլերի ընկերները մի քանի ոչխար խեղդելով՝ սուս ու փուս փախցնում են:

Հէնց գորտերն էլ շատ ճարպիկ կերպով են վարում իրանց որսի հետ. նրանք ո՛չ մի ձայն ու ծպտուն չեն հանում. անշարժ սպասում են, մինչև որսը այնքան մօտենայ, որ կարողանան մի թռիչքով նրան հասնել: Երբ արդէն այնքան մօտեցած է, իսկոյն գորտը թռչում է որսի վրայ և բռնում է նրան:

Մի տեսակ ձուկ կայ, որը կերակրում է մի-

ջատներով (ճանճեր, մըջուներ և զանազան ճիճուներ): Նա լողում է գէպի ափը և բերանը ջուր առնելով՝ շարժում է կանաչների վրայ կանգնած միջատներին, որ ջուրը ընկնեն և իրան կերակուր դառնան: Այսպէս ջրով որս անելու համար նրան ասում են հրացանաձիգ կամ որսորդ ձուկ:

Կոկորդիլոսն\* էլ որսի դուրս գալիս մեծ ըզզուշութիւն է բանեցնում. նա այնքան կամաց, այնքան սուսիկ փուսիկ է դուրս գալիս ջրից, որ համարեա՛ անկարելի է ձայն լսել: Երբեմն այդ կենդանին ծովերի ու մեծ գետերի վրայ լողացող նաւակի միջից այնպէս է լափշտակում մարդուն, որ նրա հետ լինողներից ոչոք ոչինչ չէ իմանում. նրանք գլխի են ընկնում այն ժամանակ, երբ արդէն կոկորդիլոսը ջրի տակ կտոր կտոր է անում խղճուկ մարդուն:

Մի կողմ թողնենք խոշոր կենդանիներին և անսենք, թէ արդե՞ք մարմնով և ոյժով փոքր կենդանիներն էլ խորամանկութիւն բանեցնում են:


Սրա համար ամենալաւ օրինակ կարող է լինել մեծ մըջուների թրթուռը, որը մի փոքրիկ ու դանդաղաբայլ արարած է: Նա առատ կերակուր

\*Մանկուկիւն. Կոկորդիլոսը ջրային վտանգաւոր ու մեծ կենդանի է. իւր տեսքով նման է մողեսին:



ճարելու նպատակով իր բունը շինում է Հէնց մրջուկների բնին մօտիկ: Այդ թրթուռի բունը շատ պարզ ու հասարակ է. նա մի փոս է բաց անում և այդ տեղ հողի կամ աւազի տակ ծածկուելով՝ սպասում է որսի: Երբ մրջուն և կամ մէկ ուրիշ փոքրիկ միջատ գալիս փոսն է ընկնում, իսկոյն վրայ հասնելով՝ բռնում ծծում է նրանց արիւնը: Բայց եթէ նրանք մինչև տակը չըկնեն և աշխատեն կէս ճանապարհից փախչել, այն ժամանակ մեր փոքրիկ թրթուռը՝ իր վրայ առած հոգն ու աւազը իսկոյն շարտում է նրանց վրայ և գլորում է փոսը:

Ահա այսպիսի անթիւ օրինակներ կարելի է տեսնել մեր չորս կողմում, թէ ինչպէս ամենափոքր կենդանուց սկսած մինչև ամենաբարձրը, զանազան հանգամանքներում հազար ու մի տեսակ խելացի և հասկանալի գործեր են անում: Դեռ սա քիչ է. մենք լսելու ենք կենդանիների մասին աւելի հետաքրքիր բաներ:



## 10. ԿԵՆԳԼՆԻՆԵՐԸ ԻՆՉՊԼՍ ԵՆ ԿՐԹՈՒՄ ՉԵՊԵՐԻՆ:

Այս հարցին պատասխան տալու համար շատ հեռուն չգնանք. էլի վեր առնենք այնպիսի օրինակ, որ մեզանից ամեն մէկը շատ անգամ է տեսել:

Ո՞ւմ յայտնի չէ, թէ մայր—կատուն ինչպէս հանգիստ պառկած պոչը շարժում և ձագուկներին խաղացնում է: Փոքրիկները իրանց մօր պոչի հետ դէս ու դէն են թռչկոտում, վազվզում, հազար ու մի տեսակ խաղեր են անում: Մայրը միայն այդ վարժութիւններով չէ բաւականանում. նա մուկ է բռնում ու բերում ձագերի առաջ բաց թողնում: Հէնց որ մուկը մի քիչ փախչում է, մայր—կատուն վազելով՝ բռնում—բերանն է առնում: Միքանի անգամ միևնոյն բանը կրկնում է փոքրիկների առաջ: Նրանք կանգնած մըտիկ են տալիս ու զուարճանում. վերջապէս ձագերի քէֆն էլ է գալիս. ուզում են իրանց մօրը նմանուիլ. ահա նրանցից մէկն ու մէկը վրայ

հասնելով՝ մօր բերանից խլում է մկին և մի քիչ խաղալուց յետոյ ուտում: Այսպէս միքանի անգամ միևնոյն բանը կրկնելով՝ վարժեցնում է ձագուկներին մուկ բռնելու մէջ:

Ու շագրութեան արժանի է սկիւռի վարժունքն էլ: Այս փոքրիկ կենդանին ապրում է ծառերի բնի մէջ. իր տեսքով աւելի նման է կատուի ձագին. նրա սիրած կերակուրն է կաղինն ու ընկույզը: Սկիւռը գիտէ շատ խելացի կերպով կրթել ձագուկներին իրանց կերակրից օգտուելու: Նա առաջին անգամները փոքրիկներին տալիս է բոլորովին կոտրած կաղին և կամ ընկույզ. նրանք առանց դժուարութեան վեր առնում — ուտում են: Միքանի ժամանակից յետոյ բերում է իր ձագերին այնպէս ջարդած կաղին, որ թէև կճեպները վրան են, բայց ջարդուած տեղից կարելի է տեսնել միջուկը: Փոքրիկները արդէն շատ անգամ այդ միջուկը կերել ու համը առել են. դրա համար էլ իսկոյն դէս ու դէն շուռ տալով կոտրում են ատամներով միջուկը ուտում: Երբ սկիւռը այդ բանն էլ սովորեցնում — պրծնում է, այնուհետև ամենից վերջը բոլորովին չկոտրուած կաղին և կամ ընկույզ է տալիս իր ձագերին: Սրանք արդէն լաւ ճանաչում են թէ կաղինը և թէ ընկույզը. տեսնելու պէս միջուկի անուշ համը բերաններն է գալիս. էլ երկար չեն սպասում. իս-

կոյն ջարդում և ուտում են:

Այս տեսակ կանոնաւոր կրթելու սովորութիւնը տարածուած է շատ կենդանիների մէջ անհամար օրինակներից մէկն էլ լիշենք:

Մայր ու հայր — արագիլը իրանց ձագին ահագին վարժութիւններ են անել տալիս, թէ ինչպէս պէտք է մի ոտի վրայ կանգնի, գլուխը շարժէ և ինչպէս պէտք է թռելը բաց անէ: Սրանցից ամեն մէկի սովորելը ձագի համար մի նոր դաս է. մէկը պիտի վերջացնէ, որ միւսը անցնի: Ձագերը առաջին անգամ թռչելիս շատ անվարժ են լինում, բայց այստեղ ծնողների համբերութիւնն է շատ զարմանալի:

Մայր ու հայր — արագիլը իրար հետ թռչելու շարժումներ են անում. մի քիչ վեր են բարձրանում ու էլի շուտով վար իջնում. այս բանը այնքան են կրկնում մինչև որ ձագն էլ ծնողների նայելով սիրտ է առնում քիչ քիչ թռչելու: Այսպէս կամաց կամաց սովորեցնելով՝ իրանց ձագի հետ օդի մէջ բաւականին բարձրանում, մեծ մեծ պտույտներ են անում և վերջապէս հասնում են այն գրութեանը, որ նա իր գլխին կարողանայ գորտեր ու մողէս որսալ:

Միթէ միևնոյն բանը մենք էլ չենք անում: Նոր քայլել սկսող երեխան շատ խամ ու անփորձ է առաջին օրերն ու շաբաթները փոքրիկը վա-

խենում, դողդողում է. նրա ամեն մի քայլ փոխելը ահագին մտածելու բան և ահագին աշխատանք է: Տեսէք, ինչպէս ծնողները օգնում, սիրտ են տալիս իրանց սիրելի զաւակին: Կամաց կամաց երեխան այնպէս է վարժուում, որ այնուհետեւ քայլելը նրա համար լինում է մի դատարկ ու շատ հասարակ բան: Ուրիշ գէպքերում էլ բնական կերպով դարձեալ կենդանի օրինակն ու հետզհետէ առաջ գնալը միակ և ամենալաւ միջոցն է: Եթէ երեխան „շատր խօսք“ սովորում է, նա շատ անգամ տեսել, շօշափել և անուշ համը առել է: Կրկնում ենք, դա է միակ բնական ճանապարհը, առարկան տեսնել, շօշափել և յետոյ սովորել: Այդպէս որեւէ և անում են մարդիկ ու համարեան բոլոր կենդանիները:

Ընդհանրապէս բերած օրինակներից շատ լաւ կարելի է խրատուել, որ կրթութեան ընթացքում սկզբից մինչև վերջը պարտաւոր ենք կամաց կամաց առաջ գնալ: Չմոռանանք, միշտ աչքի առաջ ունենանք սկիւռին ու արագիլին. սրանք մի բան իրանց ձագերին ցոյց են տալիս. այդ բանը սովորեցնելուց յետոյ միայն անցնում են նորին:

### 11. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ ԵՐԳԼԹԸ ՀՇՍՎԵՄԻՄ ԵՆ ՄԻՄԵՆՏ:

Գուցէ մի քիչ զարմանանք այս հարցի վրայ. բայց ոչինչ, մի փոքր համբերութիւն. դարձեալ օրինակներով տեսնելու և համոզուելու ենք, որ կենդանիները դրանից էլ զուրկ չեն:

Փիղերի ու կապիկների մէջ ընկերական կեանքը համեմատաբար շատ բարձր է: Նրանք իրանց իմբի ապահովութեան համար նշանակում են պահապաններ ու յառաջնորդներ: Մէկ տեղից միւսը ճանապարհորդելիս ունին յեանապահներ ու առաջապահներ, որ վտանգ լինելիս իմաց տան: Այս տեսակ կարգ ու կանոնից դուրս է գալիս, որ պէտք է միմեանց հասկանան, ապա թէ ոչ պահապաններ և յառաջնորդներ նշանակելը, ոչ մի միտք, ոչ մի խորհուրդ չէր կարող ունենալ:

Կենդանիների կեանքը գրող նշանաւոր Բրէհմին՝ մէկը Հնդկաստանից, գրում է փղերի մասին հետևեալը. —

«Տարուայ չոր կամ երաշտ ժամանակ, երբ ոչ

մի կաթիլ անձրև չի գալիս, շատ գետեր ու լճեր չորանում— ցամաքում են: Հնդկաստանի կենդանիները ջրի պակասութիւնից ահագին խմբերով հաւաքւում են այն տեսակ լճի մօտ, որը կարող է երկար ժամանակ նրանց ջուր տալ:

«Մի անգամ առիթ ունեցայ այդ տեսակ լճի մօտ դիտել փղերի զգուշութիւնը: Լճի մի կողմում գտնւում էր ճահիճ, միւսում տարածւում էր անտառ, իսկ երրորդ կողմում բացւում էր մի ընդարձակ դաշտ: Հրաշալի լուսնկայ գիշեր էր և ես հեշտ կերպով կարող էի տեսնել փղերին: Տեղը շատ յարմար էր նպատակիս: ձոնները դէպի լիճը տարածող մի հսկայական ու վիթխարի ծառի վրայ բարձրանալով՝ ծածկուեցի: Երբեմն երբեմն ուշադրութիւնս լարած դիտում էի այն ամենը, ինչ որ կատարւում էր: Փիղերը ինձանից հազիւ հինգ հարիւր քայլ հեռու լինէին: Ուղիղ երկու ժամ ստիպուած էի սպասել, մինչև որ երեք հարիւր քայլ հեռաւորութեան վրայ մութ անտառից դուրս ելաւ մի խոշոր փիղ. սա շատ զգուշ մօտ երկու հարիւր քայլ առաջ գալով դէպի լիճը, հանդարտ կանգնեց և ուշադիր կերպով ականջ դրեց: Նա այնքան կամաց էր եկել, որ անկարելի էր միտրել ձայն լսել. միքանի բոլոր բոլորովին անշարժ մնաց, ինչպէս մի ժառ: Յետոյ երեք տեղ կանգ առնելով՝ կամաց կամաց

առաջ եկաւ. ամեն կանգ առնելիս միքանի բոլոր ականջները սրած ուշադիր նայում էր, որ ամենաթեթեւ ձայնն անգամ կարողանայ լսել: Այսպէս նա հասաւ մինչև ջրի ափը. այնքան մօտ էր լճին, որ նրա վիթխարի պատկերը ցօլում էր ջրի մէջ. չնայած սրան, չէր ուզում իր ծարաւը կտորել: Այստեղ էլ միքանի բոլոր անշարժ կանգնած դարձեալ ուշադիր ականջ էր դնում: Վերջը զգուշ ու կամաց շուռ գալով՝ վերագարձաւ անտառի այն կողմը, որտեղից եկել էր: Քիչ ժամանակից յետոյ նա վերագարձաւ ուրիշ հինգ փղերի հետ, մօտեցաւ ջրին. այս անգամ էլ սուսիկ փուսիկ էր գալիս, բայց ոչ առաջուայ նման: Նա հինգ փիղերին այստեղ պահապան նշանակեց և երկրորդ անգամ գնաց անտառ: Փոքր ինչ յետոյ նորից եկաւ. այս անգամ արդէն շրջապատուած էր մօտ հարիւր փղերով: Սրանց առաջնորդում էր այնպէս զգուշ ու հանդարտ, որ արդէն ինձ բոլորովին մօտեցել էին, բայց ես ոչ մի ձայն ու ծպտուն չէի լսում. միայն տեսնում էի նրանց շարժուելը: Մեր վիթխարի փիղը նորից առաջ անցաւ, մօտեցաւ պահապաններին, զննեց, քննեց բոլորը և երբ համոզուեց, թէ կատարելապէս ապահով է, ոչ մի վտանգ չկայ, այն ժամանակ միայն վերագարձաւ ու հրաման տուեց առաջ երթալու: Մինչոյն ակնթարթում փղերը առանց երկիւղի վա-

գեցին դէպի ջուրը»։  
 Այս պատմութիւնից մենք տեսնում ենք, որ փիղերը այս կամ այն դէպքում ոչ միայն զգուշութիւն են բանեցնում, այլ և փառաւորապէս հասկանում են միմեանց։ Բացի սրանից արդէն պարզ և հասկանալի էր, որ նրանք իրանց հասարակական գործերը կառավարելու համար ունին առաջնորդ ու պահապաններ։

Շատ կարելի է միքանիսը կասկածեն, զբռնուար թէ ուրիշներն էլ, մանաւանդ փոքրիկ կենդանիները կարողանան միմեանց հասկանալ։ Այդ կասկածը փարատելու նպատակով անթիւ օրինակներից մէկն էլ լինենք։

Կան մի տեսակ փոքրիկ ճիճուներ կամ միջատներ, որոնք սատակած կենդանու գիակի վրայ են ձու ածում։ Որտեղ մի կտոր հօտած միս և կամ սատակած գորտ, մողես և ուրիշ կենդանի գտնեն, հաւաքւում են նրա վրայ. դրանով չեն բաւականանում. իսկոյն մի փոս են բաց անում և դիակը գլորում են նրա մէջ. այնուհետեւ էլ միջատը իջնելով փոսը՝ ձու է ածում։ Այս բոլորը այնպէս են անում, կարծէք, մեռել թաղելիս լինին. դրա համար էլ նրանց ասում են «Եւէլ Լաշալ» միջատներ։

Մի չարտնի բնագէտ դրանց մասին պատմում է ուշադրութեան արժանի հետևեալ դէպքը. —

«Մայիսեան մի գեղեցիկ օր ներս մտայ իմ պարտէզը։ Հէնց դռան մօտ տեսայ մի սատակած մուկ. հետաքրքրուելով՝ շուռ տուի ձեռնափայտովս դիակը և նկատեցի մեռել — թաղող միջատներից մէկին։ Նա զբաղուած էր փոս փորելու շարժումներով. բայց գետինը այնքան պինդ էր, որ նրա աշխատանքը զուր անցաւ։ Միջատը ստիպուած թողեց, հեռացաւ. սկսեց պարտէզում դէս ու դէն ման գալ։ Ինչ թւում էր թէ բոլորովին աննպատակ բան է. այն ինչ քիչ պոտելուց լետոյ կանգ առաւ մի մարդի մօտ։ Այստեղ գետինը բաւականին փափուկ էր. մեր միջատը սկսեց փորել. տեսնելով որ կարելի է փոս բաց անել, իսկոյն վերագարձաւ մկի մօտ և աշխատեց քաշքաշելով տանել. որքան էլ փորձեր արեց, չկարողացաւ դիակը տեղից շարժել։ Այս անգամ էլ անյաջողութեան հանդիպելով՝ յանկարծ թողեց ու անյարտացաւ։ Այժմ ես կարծում էի, թէ բոլորովին յուսահատուել է, էլ լետ գալու չէ։ Բայց սրբան եղաւ զարմանքս, երբ նա միքանի բոպէից լետոյ երեք — չորս բնկերներով վերագարձաւ։ Վայրկենաբար բոլորը մտան դիակի տակ և այնպէս մկին իրանց շալակն առնելով՝ կամաց կամաց տարան մ'որդի մօտ բացած փոսը։ Այնտեղ հասան թէ չէ, սկսեցին փոսը աւելի խորացնել և դիակը ներս գլորելով՝ հոյով ծածկեցին»։

Ահա սրանից պարզ երևում է, որ այդ փոքրիկ արարածներն էլ հասկանում են միմեանց: Մէկը չի կարող այս կամ այն բանը անել, շտապում, գնում հասկացնում է իր ընկերներին և օգնութեան է կանչում:

Այժմ կարող է հարց առաջ գալ, կենդանիները ինչպէս են հասկանում միմեանց. արդեօք նրանք էլ իրար հետ խօսում են: Այո, նրանք էլ խօսում են, բայց ոչ այնպէս, ինչպէս սովորաբար մենք ենք խօսում: Երբէք չպէտք է դրա վրայ զարմանալ. ուրբան անգամ ինքներս առանց մի խօսքի, զանազան շարժումներով, դէմքի արտայայտութիւններով մէկ մէկի բան ենք հասկացնում: Ուրբան անգամ մենք էլ մի «խ», «ս» և ուրիշ ձայներ հանելով՝ ցոյց ենք տալիս մեր տիրութիւնը, զարմանքը և այլն և այլն: Ահա այդ տեսակ շարժումներով, դէմքի արտայայտութիւններով ու զանազան ձայներով հասկանալը նոյնպէս տարածուած է շատ կենդանիների մէջ: Օրինակ՝ ո՞վ չէ տեսել, թէ ինչպէս շուներ ուրախ ժամանակ ուրիշ շարժումներ է անում, հաչում է բոլորովին ուրիշ կերպ, քան բարկանալիս:

Բացի դրանից կենդանիներից մի քանիսն էլ շօշափելով են հասկանում միմեանց. հէնց այդպէս են խօսում մրջուկները: Իհարկէ կարիք չկայ մանրամասնութիւնների մէջ մտնելու. միայն

չիշած օրինակներից պարզ տեսնում ենք, որ կենդանիները այսպէս թէ այնպէս միմեանց հասկանում են:

Նոյն խակ կապիկները ոչ միայն դէմքի արտայայտութիւններով և տեսակ տեսակ շարժումներով են հասկանում իրար, այլ շատ աւելի զանազան ձայներով: Այս բանը այնքան զարգացած է նրանց մէջ, որ շատ գիտնականներ աշխատել և աշխատում են կապիկների լեզուն ուսումնասիրել:

Ուրեմն էլ չզարմանանք, թէ կենդանիները ինչպէս են հասկանում միմեանց. նրանց խօսելու ձևերից շատերը մենք էլ ունինք:

Այս բոլորից լետոյ մի թէ պարզ չէ, որ նշանացի ու զանազան բացականչութիւններով իրար հետ խօսելն ու հասկանալը հետզհետէ զարգանալով՝ պէտք է առաջ բերէր մի այնպիսի կանոնաւոր լեզու, ինչպիսին այժմ մարդիկ ունին:

Սիրելի ընթերցող, էլ չկարծենք, թէ կենդանիները հասկացողութիւնից զուրկ արարածներ են:

Սմբողջ գրքոյկի ընթացքում տեսանք նրանց խելքի ու հասկացողութեան չափը: Մենք սովորեցանք, թէ բնագոյն ու հասկացողութիւնը ինչ նշանակութիւն ունին կենդանիների համար: Նրանք իրանց անհատական ու հասարակական գործերով

բնականաբար դիմում են սերունդի և ինքնապաշտպանութեան: Մենք տեսանք, թէ մեր ու կենդանիների արածները սրբաննման են միմեանց: Մարդիկ այս կամ այն բանը կատարելիս գուցէ շատ անգամ հաշիւ չեն տալիս, կարող են անմիջապէս աչքի առաջ չունենալ սերունդի և ինքնապաշտպանութիւնը. բայց եթէ լաւ նայենք ու քննենք, կրտսենք, որ մեր անհատական, ընկերական ու հասարակական գործերն էլ վերջապէս դիմում են միևնոյն գլխաւոր նպատակին՝ իրան պաշտպանել և սերունդ թողնել: Հէնց այդ բանը բնականօրէն պահանջում է ընդհանուր կեանքն ու ապահովութիւնը:

Ահա քիչ թէ շատ մօտիկից ճանաչելով կենդանիներին, աւելի ճանաչեցինք և՛ մեզ. չափազանց մխիթարուած կլինինք, եթէ ընթերցողները հասկանան և ըմբռնեն այդ ամբողջութիւնը:

Սրանից յետոյ էլ ուրիշ գրքոյկներով կամայ կամայ կըսովորենք մեր շրջապատը. առանց ճանաչելու շրջապատ բնութիւնը չենք կարող ճանաչել մեզ. իսկ երբ մեզ չենք չանաչում, չենք էլ կարող կանոնաւոր կերպով ծառայել և օգուտ տալ ընտանիքին, հասարակութեան ու ամբողջ մարդկութեան:

Համառօտ բովանդակութիւն ժողովրդական բնագիտական գրքոյկների, որոնք պատրաստ էն և հետզհետէ պատգուտելու էն.

Մեղու, Ընտանի կենդանիներ-(շուն, ձի և աղաւնի), Կերակրի շրջանառութիւն, Սննդառութիւն, Զանազան ոյժեր և Տիեզերքի ծագումը, Մագնիսականութիւն, Ելէքտրականութիւն, Անօրգանական քիմիա, Օրգանական քիմիա, Բաղանիք, Երկրի կեանքը, Կենդանական կեանքի զարգացումը, Բոյսերի, կենդանիների և մարդկանց կեանքը, Չարպի օգուտը և նշանակութիւնը մարդու մարմնի մէջ, Աստղեր և մոլորակներ, Մի երևակայական ճանապարհորդութիւն գէպի լուսինը, Արև և կեանք, Տիեզերք, Մարդու ըզգայարանները, մտաւոր ընդունակութիւններն ու լեզուն, և այլն, և այլն:



Handwritten text at the top of the page, likely bleed-through from the reverse side.

Main body of handwritten text in an old script, possibly Armenian, covering the majority of the page.

2013

« Ազգային գրադարան »



NL0070293



